

# ՈՎԵՐՐ ԵՆ ՍԱՅՄԱՆԻ ԱՅՆ ԿՈՂՄՈՒՄ

## Գյուլմրու լրագրողական խմբի այցելությունը Կարս



Այս հոդվածաշարը լույս է տեսնում ԱՄՆ դեսպանատան Հանրային կապերի բաժնի եւ ԱՄՆ ժողովրդավարության հանձնաժողովի դրամաշնորհային օժանդակությամբ իրականացվող «Գյուլմրու-Կարս քաղաքացիական հասարակության հանրային կապերի հաստատում» ծրագրի շրջանակներում: Այստեղ արտահայտված կարծիքները հեղինակներին է, եւ պարտադիր չէ, որ համընկնեն դրամաշնորհային օժանդակություն տրամադրող կամ ծրագիրն իրականացնող կազմակերպությունների կարծիքների հետ:




Այս ծրագրի շրջանակներում ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ ՅԿ աշխատանքային խումբը, խորհրդի նախագահ Լեւոն Բարսեղյանի ղեկավարությամբ, մայիսի վերջին եւ հունիսի սկզբին աշխատանքային այցով եղավ Կարսում:

Նպատակը՝ կապ հաստատել Կարսի ՉԼՄ-ների եւ ՅԿ-ների հետ, իսկ այնուհետ, նախ՝ կազմակերպել թուրք գործընկերների փոխադարձ այցը, ապա նաեւ այդ ընթացքում ձեւավորվելիք երկու կողմերի ֆուտբոլային հավաքականների ընկերական մրցամարտի՝ Կարսում եւ Գյուլմրուում կայանալիք խաղերը: Անհրաժեշտ էր շոշափել առկա տրամադրությունները, հասկանալ այս ծրագիրը կյանքի կոչելու կարսեցիների պատրաստակամության աստիճանը:

Գյուլմրուից Կարս ուղիղ ճանապարհով 84կմ է, մինչդեռ շրջանցիկ ճանապարհը՝ 340կմ: Ճանապարհի 128 կիլոմետրն անցնում էր Վրաստանով: Բավրայի մաքսակետից մինչեւ Բոգդանովկա ընկած 23կմ-ը, ինչպես միշտ՝ գրեթե անանցանելի էր: Ապա՝ բավականաչափ անցանելի, Ախալքալակից դեպի Ախալցխա՝ մոտ 20կմ բոլորովին նոր ասֆալտ էր փռված, եւ, դատելով ամեն ինչից, բարեխիղճ աշխատանք էր տարվում: Սա՝ շնորհիվ Հազարամյակի Մարտահրավերներ կորպորացիայի Վրացական ծրագրի, որի 295մլն դոլարից 195 միլիոնը, Վրաստանի կառավարության մշակած ծրագրով, ներդրվելու է միջպետական ճանապարհների վերականգնման ու նորոգման գործում: Ըստ այդ ծրագրի, 1-2 տարուց Վրաստանի ցանկացած մաքսակետից ցանկացած այլ մաքսակետ ճանապարհը լինելու է բարձր որակի: Մինչեւ Ախալցխա եւ այնտեղից Վալեով՝ Թուրքիայի սահմանը ճանապարհը էլի մի 25կմ քարուքանդ էր:

Թուրքիայի սահմանը հատելիս առաջինը, որ գրավեց մեր ուշադրությունը՝ ճանապարհի որակն էր: Վրաստանի ճանապարհներից հետո թվում էր, թե մեր ուղեւորությունը



Կարսի համայնապատկերը  
Կարսի բերդից



Դրվագ Կարսի նահանգի  
գյուղերից

շարունակվում է ինքնաթիռով: Թուրքիայում մեր ճանապարհի ամենաբարձր լեռնանցքը Ըլգարն էր՝ ծովի մակարդակից 2540մ բարձրությամբ: Տպավորությունն այնպիսին էր, որ վերելում ամպերն հագիվ են խուսափում մեքենային քսվելուց, իսկ երկնաքեր բարձունքից հատուկենտ գյուղեր էին երելում: Փոքրիկ գյուղեր եւ ավաններ էին, երբեմն հողածածկ կամ աթարածածկ երդիկներով: Չարմանքներից մեծագույնն այն էր, որ յուրաքանչյուր տուն երկու արբանյակային ալեհավաքով էր զինված: Ենթադրելի է, որ ալեհավաքների գնումը, ի տարբերություն Յայաստանի, այստեղ բոլորին է մատչելի:



**Յովիվը գյուղ է բերում ոչխարի հոտը:**

Ճամփին ընկած բոլոր բնակավայրերում իրենց բարվոք տեսքով աչքի էին ընկնում նախ մզկիթները, ապա վարչական շենքերը, հետո միայն բնակարանները:

Թուրքիայի հյուսիս-արեւելյան այս տարածքները, համեմատած Յայաստանի հետ, Էականորեն թերբնակեցված են: Ճանապարհային ցուցակների վրա տեղանուններից զատ նաեւ համայնքների բնակչության թիվն էր նշված:



**Սուրբ Առաքելուց եկեղեցին Կարսում**

Չնայած Թուրքիայով էր անցնում մեր ճանապարհի ճիշտ կեսը՝ 170կմ, ճանապարհի որակի շնորհիվ այն անցանք բավականաչափ արագ եւ առաջին վայրը, որ այցելեցինք, ասես բոլորիս լուռ համաձայնությամբ, Կարսի Առաքելուց եկեղեցին էր: Եկեղեցին վաղուց մզկիթի էր վերածված եւ այժմ կողպ էր: «Քյումբեթ Չամի» էր գրված ցուցանակին, այսինքն՝ գմբեթարդ մզկիթ կամ գմբեթ-մզկիթ: Այստեղ մտնելու համար հարկավոր էր գտնել մուսուլման հոգեւորականին, ինդրել, որ բացի եկեղեցին, եւ մտնելուց առաջ անպայման հանել կոշիկները: Կարգ է:

Հանգրվանեցինք Կարսի «Սիմեր» հյուրանոցում, որի ֆիրմային խորհրդանիշը Նոյան տապանն էր: Հյուրանոցի տնօրեն Ադեմ Էրբինչը՝ կլորիկ մի երիտասարդ, իմանալով մեր հայ լինելը, բարեժպիտ հայերենով ողջունեց ու կարգադրեց սենյակներ հատկացնել: Հյուրանոցն ու սենյակները հարմարավետ էին:

### **Առաջին գրույցը**

Մեր առաջին ծանոթությունը Թուրքիայում խոշոր լրատվական գործակալությունների՝ «Դոգան Հաբեր Աժանսը» եւ «Իլիաս Հաբեր Աժանսը» լրատվական գործակալությունների թղթակիցներ Մուքադդիր Յարդըմշելի ու Բեդիր Ալթընըկի հետ էր: Կեսօրյա շոգին բարեկամական գրույցի համար նախընտրելի վայրերից մեկն այստեղ թեյարանն է: Մենք նստեցինք ծառաստվերում գտնվող բացօթյա մի թեյարանում, Յայաստանյան խմբի ղեկավարը նրանց ներկայացրեց Կարս գալու նպատակը, ինչի իրագործման համար



**Բեդիր Ալտընըկը, Մուքադդիր Յարդըմշելը, Սամվել Հունանյանը, Լեւոն Բարսեղյանը եւ թարգմանիչ Հարություն Ֆիլյանը առաջին գրույցի ժամանակ:**

մեկժամյա ճանապարհ անցնելու փոխարեն գրեթե 10 ժամ էինք ծախսել: Այստեղ եւ հետագա բոլոր հանդիպումներին աշխույժ գրույցներ էին ծավալվում, որոնք թարգմանության համար հնարավորինս հանդարտ էին ընթանում: Մեր գրուցակիցները համաձայն էին, որ Հայաստան-Թուրքիա փակ սահմանը արհեստական խոչընդոտ է երկու ժողովուրդների շփման համար, մինչդեռ, սահմանի բաց լինելը սահմանակից տարածքների համար տնտեսական եւ մշակութային հարաբերությունների զարգացման խթան կարող է լինել: Նրանք կցանկանային իհարկե, որ այդպես չլիներ, սակայն քաղաքական գործիչներն այս խնդրին այլ կերպ են նայում: Մյուս կողմից, երկու երկրներում էլ կան ուժեր, որոնք մշտապես թշնամանք են սերմանում միմյանց նկատմամբ: Մեր գրույցին միացած Գյումուշփալա Քորտագը՝ «Կարս հաբեր» օրաթերթի խմբագիրը, ավելի կոշտ որակումներ տվեց այդ ուժերին, ավելացնելով, որ իր թերթում բազմիցս անդրադարձել եւ սուր քննադատության է արժանացրել այս երեւույթը:

- Մենք մեր պապերից ենք լսել, որ այստեղ հայեր են ապրել,- շարունակեց 40-ամյա խմբագիրը,- ճիշտ է, այժմ մեր կառավարությունն է փակել սահմանը, բայց ինձ հետաքրքրում է նաեւ, թե ինչ է լինելու Թուրքիայի նկատմամբ անհանդուրժողականություն որդեգրած հայկական սփյուռքի դիրքորոշման հետ: Մեզանում ավանդույթ է, որ երկու հոգու կռվելուց հետո նրանցից մեկը, ի նշան հաշտության, պետք է ձեռք մեկնի մյուսին: Ես մինչեւ օրս սպասել ու սպասելու եմ, թե երբ է Հայաստանն իր ձեռքը մեկնելու մեզ:

-Մենք նման խնդիրներ ի զորու չենք լուծելու, բայց տեղեկատվության փոխանակման, մասնագիտական կապերի հաստատման, մեր միջեւ գործընկերության խորացման խնդիրը, կարծում եմ, կհաջողվի լուծել,- ասաց Լեւոնը:

Գյումուշփալա Քորտագի համոզմամբ, երկու ժողովուրդների հաշտեցման գործում իրենց ուսերին մեծ պարտականություն ունեն լրագրողները: Նրանք պետք է անչափ ակտիվ լինեն.

- Կյանքի փորձն է ցույց տվել, որ ժողովուրդները թշնամանք չեն տաժում միմյանց նկատմամբ: Մեր համերաշխությունը Հրանտ Դինքի սպանության դատապարտման հարցում՝ դրա վառ վկայությունը կարող է լինել...

- Երբ այսպիսի զարգացումներ են, քաղաքական գործիչները ստիպված են հաշվի նստել իրողության հետ եւ քաղաքական նոր ուղի ընտրել,-գործընկերոջ միտքը փոխնիփոխ շարունակեցին Մուքադդիրն ու Բեդիրը,-մենք՝



**Չրույցին միացավ նաեւ «Կարս Հաբեր» օրաթերթի գլխավոր խմբագիր Գյումուշփալա Քորտագը:**



**-Մենք՝ Կարսի թղթակիցներս, բոլոր սահմանամերձ երկրների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատման կողմնակիցներ ենք,-ասում է Մ.Յարդմշիելը**



**Գյումուրեցի լրագրողները Կարսի Կազիմ Փաշա փողոցում գրուցում են անցորդների հետ:**



որպես լրագրողներ, տարվող քաղաքականության հիմքը պետք է խարխլենք:

Գյուժուժփալլան հիշում է, որ պատանեկան տարիքում «հայ» բառը շրջապատում ընկալվում էր իբրև հայիոյանք, բայց այդ ժամանակներն արդեն մնացել են անցյալում:

-Չային այժմ ընդունում են որպես ուրույն ժողովրդի, իսկ անձամբ ես՝ նաեւ որպես բարեկամի, բայց Օսկանյանը ֆաշիստ է ...

Մուքադդիր Յարդըմշընը, ով նաեւ CNN Turk-ի թղթակիցն է արեւելյան Թուրքիայում, իր գրասենյակում մեզ հետ զրույցի ժամանակ վերահաստատելով այն միտքը, թե սահմանի փակ պահելն անհիմաստ է, կիսվեց նաեւ որոշ պատկերացումներով.

-Մենք՝ Կարսի թղթակիցներս, բոլոր սահմանամերձ երկրների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատման կողմնակիցներ ենք: Դրա համար էլ ձեր՝ այստեղ գտնվելու առիթն ամեն կերպ օգտագործելու ենք գործին մեծապես օգտակար լինելու համար:

Լեւոն Բարսեղյանը հատկանշեց, որ մենք ներկայացնում ենք լրագրողական կազմակերպություն, որը գերծ է քաղաքական կողմնորոշումներից, չնայած յուրաքանչյուրս՝ որպես մարդ, չենք կարող համակրանքներ ու հակակրանքներ չունենալ.

- Միաժամանակ մենք բավականաչափ լավ տիրապետում ենք ձեր երկրում առկա քաղաքական իրավիճակի մասին տեղեկություններին: Մենք այն մարդկանցից ենք, ովքեր գերադասում են նախ հարաբերվել, իմանալ միմյանց, խորանալ պրոբլեմների լուծման հնարավոր եղանակների ուսումնասիրման մեջ, հետո՝ գուցեւ հասնել հիմնախնդիրների լուծմանը: Այս առումով, կարծում ենք, որ մեր մասնագիտական շփումներին խոչընդոտող հանգամանքներ չեն լինի: Մենք երեք տարի պատրաստվել ենք այս ծրագրի իրականացման համար միջոցների հայթայթմանը, Չայաստանում ամերիկյան դեսպանատան դրամաշնորհային աջակցությամբ այժմ մեր այցը հնարավոր դարձավ: Այժմ էլ հավատում ենք, որ մեր գաղափարն իրագործելի է:

Մուքադդիրը հավաստիացրեց, որ ինքը մեզ չի ընդունում սոսկ որպես լրագրողական կազմակերպության անդամների, իր համար մենք բարեկամներ ենք, իսկ բարեկամների ծրագրերին մասնակցությունն ինքնին ուրախալի փաստ է.

-Չետո՞ աշխարհին Չայաստան-Թուրքիա հարաբերությունները նոր տեսանկյունով ներկայացնելու հնարավորություն



**Կարսի կենտրոնում**



**Կարսի փողոցներն աչքի էին ընկնում մաքրությամբ:**



**Նախանձելի էր նաեւ փողոցների սալապատման որակը ...**

կատեղծվի: Իմ խորին համոզմամբ, երկու երկրների ժողովուրդները հաշտության կողմնակիցներ են, ուստի շատ բարձր եմ գնահատում ձեր կատարած քայլը:

Մուքադդիր Յարդըմշըելը յոթ տարի է, ինչ Կարսում է ապրում ու այդ ընթացքում շատ հայերի է հանդիպել. նրանցից շատերի նպատակն է եղել այցելել պատմական Անի: Նա նաեւ հավատացած է, որ Կարս այցելած բոլոր հայերին էլ ուրախությունն ու հուզմունքն է համակել: Այստեղ նրանց ազատ տեղաշարժվելու իրավունքը ոչնչով չի սահմանափակվել: Մուկադդիրը կարծում է, որ Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերություններում ստեղծված լարվածության պատճառներից մեկն էլ այն է, որ հայկական սփյուռքը բավական հաճախ է փորփրում անցյալը, ինչն, իհարկե, այստեղ անհանգստանալու տեղիք է տալիս: Լրագրողն ուզում է հավատալ, որ այս եւ համանման ծրագրերի ընթացքը սփյուռքահայության գործադրած ճնշման, եթե ոչ զգալի, ապա որոշակի թուլացման ազդակ կծառայի... Այսուհանդերձ, մեզ հետաքրքիր էր, թե ներկայում ի՞նչ տրամադրություններ են տիրում Կարսում, մարդիկ ի՞նչ են մտածում սահմանի վերաբացման մասին:

-Սահմանի բացումը, անշուշտ, պետական մակարդակով որոշվելիք խնդիր է, բայց, եթե բնակչության ցանկության տեսանկյունից ենք նայում, վստահեցնում եմ, որ շատերը կուզենային անարգել ելումուտ անել սահմանով,- ասում է Մուքադդիրը:

### **Հանրահայտ ստորագրահավաքի մասին**

2004 թվականին, Կարսի քաղաքապետարանի նախաձեռնությամբ, քաղաքում ստորագրահավաք էր կազմակերպվել: Մարդիկ ստորագրություն են հավաքել այն մասին, որ կուզենային, որ երկրի արեւելյան սահմանը վերաբացվեր: Նույն ստորագրահավաքի ժամանակ երկրորդ հարցը եղել է Հայաստանի Մեծամորի ատոմակայանի հետագա գործարկման կասեցումը: Կարսում գերակա մտահոգություն կա, որ հին տեխնոլոգիաներով շահագործվող ատոմակայանը չի կարող անվտանգ լինել ամբողջ տարածաշրջանի համար: Ստորագրահավաքի արդյունքը ցույց է տվել, որ 50 հազար մարդ կողմ է սահմանի վերաբացմանը: Հարկ է հաշվի առնել, որ Կարս քաղաքի բնակչությունը 78.500 մարդ է, իսկ Կարսի նահանգի բնակչությունը՝ մոտ 300.000 մարդ: Բուն ստորագրահավաքը լայնորեն լուսաբանել են տեղի բոլոր լրատվամիջոցները: Պատմում էին, որ քաղաքի մեծ խաչմերուկներում սեղաններ են դրվել, մարդիկ մոտեցել են ստորագրել են: Այս ստորագրահավաքում առաջինների շարքերում լրագրողներն են իրենց ստորագրությունները դրել: Ապա հավաքված 50 հազար ստորագրությունները ուղարկվել են խորհրդարան:



**Կարսի այս հին կառույցի՝  
Նախկին քաղաքապետարանի  
կողքին նոր շենք է կառուցվելու:**



**Կարսի նախկին  
քաղաքապետարանի շենքը  
կոկիկ ու սորոգված է:**

-Կարսեցիները մի հետաքրքիր փաստարկ էլ են առաջ քաշում, -բացատրեց Յարդըմշընը, -այն դեպքում, երբ Ստամբուլից օդային չվերթներ են կատարվում դեպի Յայաստան, Յայաստանից՝ Ստամբուլ, Յայաստանի քաղաքացիներն անարգել, երրորդ երկրների տարածքով մտնում են Թուրքիա, Թուրքիայի քաղաքացիները՝ Յայաստան, ուրեմն՝ ինչո՞ւ անհնար պիտի լինի ավտոբուսային ուղիղ կապը մեր միջեւ, ասե՛ք Գյումրի-Կարս երթուղով: Ստացվում է, որ այդ մենք՝ կարսեցիներս ե՛նք իրականում շրջափակման մեջ:

Նույն 2004-ի հունիսի 15-16-ը Շիրակի Մրցունակության Կենտրոնը «Գյումրի-Կարս պատմամշակութային արժեքների պահպանում եւ զբոսաշրջության զարգացում» թեմայով սիմպոզիում էր կազմակերպել Գյումրիում: Նախօրոք աշխատանքներ էին տարվել տեղական կազմակերպությունների հետ, տեղի էին ունեցել հանդիպումներ ու երկկողմ քննարկումներ: Այն ժամանակ Յայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Օրդվեյը, չնայած Թուրքիայից ներկայացուցիչների բացակայությանը, հույս էր հայտնել, թե 18-19-րդ դարերից համընթաց քայլող երկու քաղաքների՝ այժմյան դինամիկ զարգացման պարագայում հնարավոր կլինի վերականգնել նաեւ Յայաստանի եւ Թուրքիայի վերջին տարիներին բարդացած հարաբերությունները, ինչից էլ, անշուշտ, օգուտ կքաղի ամբողջ տարածաշրջանը: Սիմպոզիումի ընթացքում արժեւորվել էր Գյումրիի եւ Կարսի պատմական նշանակությունն ու զբոսաշրջության զարգացման ներուժը: Իսկ այս գործընթացում առանձնակի կարեւորություն էր տրվել հնագույն Ասիին՝ որպես զբոսաշրջության գրավիչ եւ կապող օղակի:

Դառնալով կազմակերպված ստորագրահավաքի փաստին, Յարդըմշընի գնահատականներով, դրան՝ ինչպես նախորդած, այնպես էլ հաջորդած ժամանակահատվածներում, հայ-թուրքական հարաբերությունների բարելավման կողմնակիցների հասցեին չդադարեցին քննադատություններ հնչեցնել որոշ շրջանակների ներկայացուցիչներ:

-Ձեզ մոտ էլ, անշուշտ, թուրքերի հետ հաշտության կողմնակիցների նկատմամբ վերաբերմունքը միանշանակ չէ, մեզ գրեթե դավաճաններ էին համարում... -ոչ այն է՝ հարց տալու, ոչ էլ երեւույթը հաստատելու պես ասաց Մուքադդիրը, -բայց հիմա, գնալով մեր կողմնակիցների թիվն աճում է, հետզհետե ավելի ու ավելի է մեծանում հայ-թուրքական սահմանի վերաբացման կողմնակիցների թիվը:

Իսկ նրան նման հարցերում դժվար է անտեղյակ համարել: Նա առիթ է ունեցել երեք տարի առաջ գործընկերների հետ



**Այս շենքում տեղավորված է Կարսի հիվանդանոցներից մեկը:**



**Ասիի Սմբատյան պարիսպները**



**Ասիի քարե կամրջի ավերակները Ախուրյանի վրայով**



լինել Հայաստանում՝ քաղաքական իրավիճակի լուսաբանման առաքելությամբ: Նրանք նույնպես ստիպված են եղել Վրաստանով մուտք գործել Հայաստան: Հյուրընկալվել են Երեւանի կենտրոնում: Մի օր, երբ տաքսիով երթեւեկելիս են եղել, զգուշության համար, ուղեկցող ընկերոջը խնդրել են վարորդին չասել իրենց ազգային պատկանելության մասին: Սակայն, երբ ականաբացահայտվել է այդ փաստը, վարորդը, ի զարմանս իրենց, անմիջապես հավաստիացրել է, որ դա որեւէ խնդիր չի կարող հարուցել իրենց միջեւ:

Այն հարցին, թե արդյո՞ք տեղի լրատվամիջոցներն ընդունակ են հասարակական կարծիք ձեւավորել, թե՞ դրանք սոսկ տեղեկատվություն փոխանցողներ են, Մուքադդիիրը պատասխանեց, որ կա եւ՛ մեկը, եւ՛ մյուսը: Առաջավորների շարքում նա առանձնացրեց Գյումուշփալլա Քորտագի թերթը՝ «Կարս Հաբեր»-ը, որում շատ հրապարակումներ, ըստ Մուքադդիիրի, տողատակային խորը բովանդակություն են պարունակում ու բավականին պահանջարկ ունեն ընթերցողների մոտ: Այդ պահին ականա հիշեցի Գյումուշփալլայի հետ զրույցում մեզ ուղղված այն երկիմաստ խոսքը, թե մենք սպանողների ու զոհերի թոռներ ենք, դա ժամանակին մեծ ողբերգություն է եղել մեր պապերի համար: Եւ իր կարծիքը. «Հարկ կա՞, որ այսօր էլ մենք՝ տուրք տալով դրան, հրաժարվենք մեր հարաբերությունները նորոգելուց»:

Լրագրողները պատմում էին, որ հենց մայրաքաղաքից որեւէ պաշտոնյա է այցելում Կարս՝ իրենց առաջին խոսքը՝ ուղղված պաշտոնյաներին ու պատգամավորներին՝ սահմանը շտապ բացելու խնդիրն է.

-խորհրդարանի պատգամավորության բոլոր այն թեկնածուներին, որոնք այցելում են Կարս (զրույցը տեղի էր ունենում Թուրքիայի խորհրդարանական ընտրություններից մի քանի շաբաթ առաջ) միեւնույն հարցն ենք տալիս՝ ի՞նչ եք անելու սահմանի բացման համար, իսկ արդեն պատգամավոր եղած թեկնածուներին հարցնում ենք, թե ինչ եք արել այդ ուղղությամբ՝ ձեր գործունեության ընթացքում: Մյուս կողմից, մեզ իսկապես գոհացրեց, երբ Սեւծովյան համագործակցության խորհրդի հերթական հանդիպման ժամանակ ՀՀ Արտգործնախարար Վ.Օսկանյանն ասաց, թե «Հայաստանը ոչ մի նախապայման չի դնում սահմանի բացման համար», մենք անմիջապես մեր գոհունակությունը արտահայտող հոդված գրեցինք, -պատմում է Մուքադդիիրը, -մենք ընտրությունների նախօրեին հանրությանն ուղղորդում ենք այն թեկնածուների օգտին, ովքեր կողմ են հարեւան երկրների հետ բարեկամությանը: Չպիտի մոռանալ, որ մեծ բարդին փոքր է եղել առաջ... Այսպես է մտածում այստեղ աշխատող լրագրողների մեծ մասը, իհարկե կան 2-3



**Կարսի բազմաթիվ մզկիթներից մեկը:**



**Կարսի հին քարե կամուրջը Կարսագետի վրա**



**Հին քաղաքում**

լրագրողներ, որոնք հակառակ կարծիքին են՝ ազգայնականներ են:

Առհասարակ, Մուքադդիիրը լավ հարաբերություններ ունի բոլոր լրատվամիջոցների հետ: Ո՛ր այստեղ գալու մեր նպատակը նրան այնպես էր ոգեւորել, որ մեզ հնարավորինս օգնելն անձնական պարտավորության էր վերածվել: Յարդըմջընել ազգանունը թարգմանաբար նշանակում է՝ աջակից ձեռք՝ օգնական, այնպես որ՝ կարելի է ասել, նրա վարքը համահունչ էր ազգանվանը:

**9 օրաթերթ եւ ոչ մի շաբաթաթերթ**

Ինչպես ներկայացրին մեր գործընկերները, Կարսում լույս է տեսնում 9 օրաթերթ, չկա որեւէ երկշաբաթաթերթ կամ ամսագիր: Լույս տեսնող թերթերը հետևյալն են.

Օրաթերթը	Տպաքանակը	Խմբագիրը
Չարդաշ Կարս Չաբեր	600	Գյումուշփալլա Զորտագ
Սերհատ Կարս	300-450	Ֆիկրի Դուրգուն
Օլչեկ (Չափում, կշռադատում)	300-400	Սալի Շահին
Դենգե (Յավասարակշռում)	100-150	Սալի Շահին
Կարս փոստասը	150-250	
Յալկ (Ժողովուրդ)	150	
Բոռա (հոսանք, շարժում)	150-200	
Յուր Յուրտ (ազատ երկիր)	150-200	
Օնդուր (առաջնորդ)	300	

Կարսի օրաթերթերը լույս են տեսնում շաբաթը 6 օր, ամառային կամ ձմեռային արձակուրդներ չունեն այստեղ: Թերթերը տպվում են օֆսեթ եղանակով, սեւ-ճերմակ են, տեղական գունավոր թերթերն այստեղ շռայլություն կլինեին՝ ծախսատար, եւ բարձր ինքնարժեքով: 1-2 տպագրական մամուլ ծավալ, գինը՝ 10-25 դուրուշ, կամ 0,1-0,25 թուրքական Լոր լիրա: Լոր լիրան հնից 1մլն միավորով նվազեցված է: Այսինքն, եթե մի տեղ իմանում եք, որ այսինչ բանն արժե «10 միլիոն», նույնն է, թե արժե 10 Լոր թուրքական լիրա (10 YTL): Ահա, տեղական թերթերի գինը այստեղ տատանվում է 26-65 դրամի համարժեքի միջակայքում: Թուրքն էլ է Թուրքիայում արտադրվում, ներկանյութերն էլ: Մեր այն հարցերին, թե արդյո՞ք թերթի գործը գործարարության տեսանկյունից իմաստ ունի Կարսում, իսկապես եկամտաբե՞ր է, զարգացու՞մ կամ առաջխաղացում կա՞ այստեղ, բոլոր զրուցակից խմբագիրներն էլ պատասխանում էին, որ իսկապես առաջընթաց կա, չնայած խիստ մրցակցությանը:



**Կարսի Շուկայի հարեւանությամբ**



**Կարսում 9 անուն օրաթերթ է լույս տեսնում**



**Կարսի օրաթերթերի տպաքանակը տատանվում է 100-600 օրինակի միջակայքում:**



Ստացվում է, որ 78500 բնակչություն ունեցող Կարսում օրական սպառվում է 2300-2600 օրինակ տեղական թերթ: Թերթերը հիմնականում իրացվում են բաժանորդագրությամբ, օրինակ՝ «Կարս Հաբեր»-ի 600 տպաքանակից 400 օրինակը իրացվում է բաժանորդագրությամբ: Արդեն կեսօրն անց՝ Կարսի կենտրոնական կրպակներում եւ վաճառակետերում կարելի էր միայն կենտրոնական թերթերը գնել, տեղականների փոքր խմբաքանակները սպառված էին: Ընտրությունների ընթացքում տեղական թերթերի տպաքանակը որպես կանոն աճում է մինչեւ 70-80 տոկոս: Թերթերը երկու հարկատեսակով են հարկվում այստեղ, 25% ԱԱՀ եւ 18% շահուղթահարկ:

Կարսի թերթերի խմբագրությունները տեղավորված են 1 կամ լավագույն դեպքում՝ երկու սենյակում, ունեն 1-2 համակարգիչ, սեփական լրագրող ունենալը շռայլության պես բան է, խմբագիրն է թերթի հիմնական հոդվածագիրը, բովանդակության պատասխանատուն: Տեղական թերթերը լայնորեն օգտվում են թուրքական լրատվական գործակալությունների տեղեկություններից, հոդվածներից եւ լուսանկարներից, նրանք բաժանորդագրված են այդ գործակալությունների լրատվական հոսքերին, եւ հաճախ ստացվում է այնպես, որ միեւնույն լուրը կամ լուսանկարը՝ մի կարեւոր իրադարձության մասին՝ կարող է տեղ գտնել մի քանի թերթերում միաժամանակ: Օրինակ, այդպես եղավ մեր այցելության հաջորդ օրը, երբ մեր այցի մասին հոդվածները եւ լուսանկարները լրատվական գործակալություններից ստացան եւ տպագրեցին Կարսի մի քանի օրաթերթերում:

Կարսում այժմ լույս տեսնող թերթերից ամենահինը «Յուր Յուրտս» է՝ 50 տարեկան:

Թերթերից մի քանիսը սեփական տպագրական մեքենաներ ունեն, որոնք 1-2 վարպետ-ենթավարպետ են աշխատեցնում: Այդ օֆսեթ մեքենաները 1՝ այս դեպքում՝ սեւ գույնով են աշխատում: Սենյակներում, որտեղ տեղադրված են այդ մեքենաները, մեր սովետական տպարանների մրոտությունն ու թափփվածությունն է տիրում:

**«Օլչեկ» օրաթերթ**

Մուքադդիիը մեզ հիմնականում ծանոթացնում էր այն ՉԼՄ-ների հետ, որոնք այս կամ այն չափով կշիռ ունեին քաղաքում եւ որոշակի հետաքրքրություն կարող էին ներկայացնել մեզ համար:

Սալիի Շահինի հիմնադրած «Օլչեկ» թերթը լույս է տեսնում



**Կարսի օրաթերթերի կեսից ավելին սպառվում է բաժանորդագրմամբ:**



**Կարսի օրաթերթերի խմբագրություններում լրագրողները սակավաթիվ են, հիմնական աշխատանքը կատարում է խմբագիրը:**



**Սալի Շահինը հպարտությամբ մեզ ցույց է տալիս իր խմբագրած թերթերից մեկը:**

1991 թվականից: «Օլչեկը» Կարսում տպագրվող մյուս 8 թերթերի պես օրաթերթ է: Տպաքանակը՝ 600 օրինակ, հատավաճառի գինը՝ 10 դուրուշ (մանրադրամ)՝ մոտ 26 դրամ: Սալիի Շահինը թռչակառու է, երաժիշտ, աշուղական երգերի բանահավաք: Նա նաեւ գրքերի հեղինակ է: Ժամանակին թղթակցել է Թուրքիայում ամենահեղինակավոր թերթերից մեկին՝ «Յուրիեթին»: Նա նաեւ Կարսում լույս տեսնող «Դենգե» թերթի հիմնադիրն է: Յիմնադրած թերթերից բացի նաեւ լարային գործիքների խանութ ունի: Նա մեզ հենց այդ խանութում ընդունեց: Որքան հնարավոր էր կռահել, Սալի Շահինը հարգված եւ այստեղ ազդեցիկ մտավորականներից մեկն էր, ու նրա հիմնական բիզնեսը նախ երաժշտական գործիքների եւ պարագաների առևտուրն էր, ապա միայն թերթի գործը: Երբ այս կենսուրախ եւ բարեհամբույր մարդն իմացավ մեր ազգությունն ու գալու նպատակը, անթաքույց ոգեւորությամբ ողջունեց եւ հրավիրեց ներս:



-Անմեղ վրիպումների դեպքում թերթերը նախազգուշացումներ են ստանում:

Սկզբում խոսակցությունը ծավալվեց լրագրողական գործի շուրջ: Պետականորեն մամուլի վերահսկողության խստացումից հետո, ինչպես խոստովանում է պարոն Շահինը, հենց մամուլն եղավ տուժողը: Յրապարակումները նվազ հետաքրքիր դարձան, սա իր հերթին բացասաբար ազդեց պահանջարկի վրա, հետեւաբար՝ տպաքանակը կրճատվեց: Թերթի հրապարակման համար պահանջվում են նահանգապետի եւ դատախազության թույլտվությունները: Եթե նահանգապետին դուր չի գալիս որեւէ հոդված, ապա նա կարող է արգելել տվյալ թերթի տպագրումը: Իսկ ոչ ճիշտ տեղեկատվության տարածման դեպքում միջամտում է դատախազությունը՝ ընդհուպ մինչեւ դատական գործի հարուցում: Անմեղ վրիպումների դեպքում թերթերը նախազգուշացումներ են ստանում: Նման պայմաններում «Օլչեկը» գերադասում է հավասարակշռություն պահպանել եւ աջ կամ ձախ հոսանքներից հեռու մնալ: Ինչպես եւ Կարսի մյուս թերթերում, աշխատակազմը մեծ չէ՝ 4 հոգի: Խմբագրությունը տեղավորված է փոքր սենյակում, կայքը՝ երկու համակարգիչներ են, աշխատակիցները՝ երիտասարդ: «Օլչեկում» աշխատելու համար առաջադրվող նվազագույն նախապայմանը 10-ամյա կրթություն ունենալն է:



«Օլչեկ» թերթի խմբագրությունը Կարսի կենտրոնում

Սալիի Շահինի տրամադրությունը միանգամից բարձրացավ, երբ Լեւոն Բարսեղյանը ներկայացրեց մեր այցի նպատակն ու ծրագիրը:

-Շատ ուրախ եմք ու համոզված, որ այսօր երկու պետություններն էլ մերձեցման կարիք ունեն: Իսկ եթե ժողովուրդներն են դա ուզում, ապա լրագրողները պիտի նպաստեն սահմանի վերաբացմանը:

Պարոն Շահինը կարծում է, թե Ֆրանսիայում Թուրքիայի



Երաժշտական լավագույն գործիքները վաճառվում են Սալի Շահինի խմբագրություն-խանութում:

հանդեպ անհանդուրժողության քաղաքականություն է մշակվում, բնականաբար, իրենք նեղվում են դրանից, ուստի հարց է տալիս՝ պե՞տք է արդյոք ավելորդ լարվածությունը:



-Հայաստանին մենք բարեկամ ենք համարում: «Եվրատեսիլ» փառատոնին հայ երգչին ամենաբարձր միավորը եկավ Թուրքիայից, իսկ մեր երգչին Հայաստանը ոչ մի միավոր չտվեց... Բայց կարծում եմ՝ ձեր այցը կարող է մեր քաղաքների բարեկամության բանալին հանդիսանալ:



**-Ադրբեջանը եղբայրական պետություն է եւ համաձայն չէ սահմանի վերաբացմանը:**

Լեւոնը հույս հայտնեց, որ այս ծրագրի ընթացքին իրենց մասնակցությունը կունենան նաեւ երկու քաղաքապետները:

-Իսկ մենք մեր հերթին այս մասին կտեղեկացնենք նահանգապետին, ու ամեն ինչ պաշտոնական հիմքերի վրա կդրվի,- իր կողմից հավաստեց Սալիհ Շահինը:

Ինչ վերաբերում է երկու կողմերի միջեւ ֆուտբոլային հանդիպում անցկացնելու գաղափարին, Լեւոնն ասաց, թե պատահաբար չի ընտրել այդ մարզածեւը, քանի որ երկու քաղաքներում էլ սիրում են այն: Եվ իհարկե, ուրախալի կլիներ, եթե մրցակից թիմում ընդգրկված լինեին նաեւ «Օլչեկի» աշխատակիցները:

### **«Սերհատ Կարս» օրաթերթ եւ «Արարատ Ջան»**

«Օլչեկի» խմբագրի հետ բարեկամական գրույցից հետո մի տեսակ անսպասելի նախաբանով սկսվեց մեր հանդիպումը «Սերհատ Կարս» օրաթերթի խմբագիր Ֆիկրի Դուրգունի հետ, ով տեղեկանալով մեր այցի նպատակին, ասաց, թե այն անիրատեսական է համարում, քանի դեռ Ղարաբաղի հարցն իր լուծումը չի ստացել:

-Ադրբեջանը եղբայրական պետություն է եւ համաձայն չէ սահմանի վերաբացմանը: Ո՛ր այս իրավիճակում նրանց չսատարելը մեր շահերից չի բխում: Այս քայլը լուրջ վնաս կհասցնի մեր հարաբերություններին:



**Ֆիկրի Դուրգունի հետ մեր գրույցի կեսին «Սերհատ Կարս» թերթի խմբագրություն ժամանեց Յուլջել Սեգերը**

Լեւոն Բարսեղյանը Դուրգունի պաթետիկ խոսքերից հետո նշեց, որ մենք կարծիքներ ենք հավաքում ու այս առումով հետաքրքիր էր նաեւ նրա կարծիքն իմանալը: Մյուս կողմից՝ «Մենք լրագրողներ ենք, քաղաքական գործիչներ չենք,- ինչեցրեց նա,- ու կարող ենք մեր կարծիքը կառուցել միանգամայն անկախորեն»:

Մեր գրույցի ժամանակ խմբագրություն մտավ լրագրողների տեղական միության նախագահ Յուլջել Սեգերը: Նա մեր գալու մասին նախօրոք գիտեր ու հատկապես այդ պատճառն էր նրան բերել խմբագրություն:



-Սիրելի կոլեգաներ, ձեզ տեսնելով մեծապես ուրախացա: Ես որպես ցանկալի հյուր եմ ընդունում ձեզ...

Սեզերը համոզված է, որ Գյումրու եւ Կարսի լրատվամիջոցները կարող են երկու ժողովուրդների բարեկամության կապող օղակ հանդիսանալ, ուղղակի դրա համար այս կայծն էր պետք: Երբ սահմանը բաց է եղել, նա հաճախակի է շփվել հայերի հետ: Իրենց նկատմամբ ընդգծված հարգանքի համար հայերը նրան անվանել են «Արարատ ջան»: Արարատ ջանն անձամբ ծանոթ է Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ, իր ընկերն է համարում այն ժամանակ նախագահի խորհրդական Ժիրայր Լիպարիտյանին եւ ԱԺ նախկին խոսնակ Բաբկեն Արարքյանին: Այժմ էլ հարգանք է տածում Ռոբերտ Զոչարյանի հանդեպ, որովհետեւ «նա ամբողջ մի ժողովրդի է ներկայացնում»: Պատահել է, որ երկաթուղու գործած ժամանակ գնացքում հայերի է հանդիպել, հրավիրել է նրանց Կարս՝ զբոսանքի: Վստահություն է ներշնչել՝ եկել են ու համոզվել, որ այստեղ իրենց վտանգ չի սպառնում: Զետո արդեն շատ խմբեր են հաջորդել միմյանց: Մի խոսքով՝ աշխուժացել է հայերի ելումուտը Կարս:

-1991-1992-ին հայերը Դոկու Կապիով (սա երկաթուղու վերջին կայարանն է դեպի Չայաստան, ապա՝ սահմանն անց՝ Ախուրիկ կայարանն է Չայաստանում) գալիս էին Կարս, գնում էին Սիրիա: Ես լրագրող էի, գնացի հայերին ասի՝ եկեք, գնանք Կարսը ցույց տամ, վախեցան, չեկան, ասում էին թե՛ կարսեցիք մեզ կմորթեն: Ջանիկյան ազգանունով մի հայ կար, թուրքերեն վարժ խոսում էր, ասացի՝ մի՞ թե ես վատ մարդ եմ, նման տպավորություն՞ն եմ թողնում, եկեք, վստահեք ինձ, ես սիրով Կարսում ձեզ ման կածեմ... Ի վերջո մի քանի կին, աղջիկ, տղամարդ, համաձայնեցին, ուղեկցեցի, Կարսը ցույց տվեցի, ասացի «Դուք իմին հարազատ», -հայերեն ասում է պարոն Սեզերը,-Դոներ հյուրասիրեցի (Կարսի խորոված)... հետո ուրիշ խմբեր ուղարկեցին, ասել էին՝ գնացեք «Արարատ Ջան»-ին գտեք: 1991-ին անձամբ եմ հանդիպել պետական մարմինների հետ, հորդորել եմ շուկա բացել, ուր հայերը կկարողանային առելուոր անել, բացատրել եմ դրա նշանակությունն ու հասել նպատակիս,-շարունակեց Սեզերը: -Երբ շուկայի հարցը լուծվեց, հյուրանոցում այլևս տեղ չկար: Զայերն սկսեցին թուրքերի տներում հյուրընկալվել, իրենց ապրանքը պահ տալ նրանց: Վստահություն կար միմյանց նկատմամբ: Ես անձամբ ոսկերիչներին խնդրել էի չխաբել հայերին:-Անչափ տպավորիչ ու արտիստիկ պատմում էր մեր մոտ 55-ամյա գրուցակիցը: Նրա պահվածքն ու խոսքի վարպետությունը պատկառանք էին ներշնչում այնպես, որ ներկաներս կլանված լսում էինք մոտ 1 ժամ:

-1993 թվի մարտին, երբ սահմանը փակվեց, մոտ 200



**-Մենք լրագրողներ ենք, քաղաքական գործիչներ չենք,- ասում է Լ.Բարսեղյանը,-ու կարող ենք մեր կարծիքը կառուցել միանգամայն անկախորեն:**



**Ծխենք մի հատ...**



**- Զայաստանը մեծ ժողովուրդ ունի, հայերը 5000 տարվա ժողովուրդ են, նրանց հարկավոր է սիրել եւ մեծարել... քենը ծաղիկ չի տա,-ասում է «Արարատ Ջան»-ը:**

հայաստանցիներ կային Կարսում, ովքեր վախենում էին Սարախի անցակետով Թուրքիայից դուրս գալ, բայց կառավարությունը նրանց անվտանգության մասին մտածել էր,- պատմում էր նա:

Այդուհետ էլ Յուզեֆ Սեգերը սահմանի վերաբացման համար ջանքեր չի ինսայել: 1997-ին Չանկայայում նա հանդիպել է նախագահ Սուլեյման Դեմիրելի հետ եւ չի վարանել ասել ճշմարտությունը. «Հայաստանցիների մուտքը Թուրքիա օդով բաց է, ծովով բաց է, միայն Կարսի ցամաքային ճանապարհն է փակ, սա ոչ թե հայերի շրջափակումն է, այլ՝ մեր»:

Յուզեֆ Սեգերը խոսում է դանդաղ, յուրաքանչյուր բառն ընդգծված, այնպես, որ թարգմանչին թույլ է տալիս անշտապ ու զգույշ մատուցել խոսքը: Ո՛ր ինչն է հետաքրքիր. Ֆիկրի Դուրգունը, ով քիչ առաջ այնքան խանդավառված էր խոսում ադրբեջանցիների հետ եղբայրական շահերի հարգման մասին, այժմ ուշադրությամբ ու սիրով հետեւում էր զրույցին եւ չէր փորձում կես խոսքով անգամ ընդհատել նրան: Ընդամենը Յուզեֆ Սեգերի ծխախոտ կպցնելու արանքում հիշեց, որ իր նախնիները Գյուլլիբուլադից են, ու իրենց բառապաշարում բազմաթիվ «հայկական» բառեր կան, որոնք լսել է ավազներից, ու սկսեց թվել՝ «սամավար», «կուռլկա», «լոժկա», «չաշկա» եւ այլն...

-Եկեք չխորացնենք վրեժը...: Ինքներս գլուխ հանենք մեր առջև ծառացած խնդիրներից,- շարունակում է Սեգերը: - Ենթադրենք մեկի էլը կորել է: Ո՛րիշ մեկն էլ է որոնում էշին: Ասածս ինչ է, Հայաստանի եւ Թուրքիայի հարցերը երգողներն ու սուլողները չեն լուծի: Այդպես խնդիրներ չեն լուծվում:

Պարոն Սեգերն ասում է նաեւ, որ ինքը հրապարակավ խոսող մարդ է. իր այս նկատառումները մեկ անգամ չէ, որ բարձրաձայն ներկայացրել է: Ըստ նրա.

-Հայաստանը սփյուռքի ազդեցության ներքո է, մյուս մասն էլ Ռուսաստանի կամ ԱՄՆ-ի: Բայց մենք հեռատես մարդիկ ենք, պետք է մեր հարաբերությունները լավացնենք: Եկեք փորձենք... Ձեր՝ այստեղ գտնվելն արդեն իսկ մի քայլ առաջ է, ուրախ ենք, որ այդ քայլն արել եք: Ես տասը տարի մշտապես գրել եմ, որ հայերի հետ մեր բարեկամությունն անհրաժեշտ է, սահմանի վերաբացման ամենաակտիվ նախաձեռնողներից եմ եղել: Ինձ նույնիսկ կասկածել են, թե հայ եմ, իսկ Ադրբեջանում՝ դավաճան են հայտարարել, մինչդեռ իմ ուզածն է՝ միեւնույն ջերմությամբ նայել եւ՝ Ադրբեջանին, եւ՝ Հայաստանին: Հայաստանը մեծ ժողովուրդ ունի, հայերը 5000 տարվա ժողովուրդ են, նրանց հարկավոր է սիրել եւ մեծարել... քենը ծաղիկ չի տա:



**«Սերհատ Կարս» թերթի խմբագրությունը տեղավորված է այս մի սենյակում: Միջնորմից այն կողմ տպագրական մեքենան է:**



**Կարսի զույգ առյուծները Կազիմ փաշա փողոցի սկզբնամասում**



**Ռուսաստանյան Դաշնությունից Կազիմ Կարաբեքիր փաշային նվիրված հրամանատարական վագոնը**

Խմբագրատան ապակեպատից՝ փողոցի մյուս կողմում գտնվող դեղնագույն ներկած շենքը ցույց տալով՝ Սեգերն ասաց, թե այն կառուցվել է 115 տարի առաջ: Մի հայ է կառուցել՝ Տիգրանից բերված սել քարով: Երկու տարի է, ինչ քաղաքի շենքերի պատերը գունավորում են, բայց ինքը չի ընդունում դա, ասում է.

-Խայտառակություն է, պետք է պահպանել քարի բնական գույնը:

Եվ ընդհանրապես՝ չափազանց անմիջական ու անկեղծ մարդ լինելով, Յուլիա Սեգերը կողմնակից էր ամենայն բնականի, վերաբերվեր դա արտաքին, թե ներքին առանձնահատկության պահպանմանը.

- 1992-ի ձմռանը Կարսի շուկայում տեսա՝ երեք հայեր մրսում էին, քյաբաք տարա: Ասացին.«հա՞յ ես», ասացի՝ չէ, թուրք եմ: Փաթաթվեցինք, ողջագուրվեցինք: Չպետք է մոռանալ, որ չնայած Ադրբեջանը Թուրքիայի բարեկամն է, Հայաստանն էլ մեր հարեւանն է: մենք այսպես ապրելու ենք կողք-կողքի:

### **«Կա-Մեր» Ֆեմինիստական շարժման Կարսի գրասենյակում**

Քաղաքի ճարտարապետական կերտվածքի պահպանմամբ մտահոգ էին նաեւ «Կա-Մեր» («Կանանց կենտրոն») հասարակական կազմակերպության անդամները: Նրանք պատրաստվում են Կարսի ճարտարապետության մասին գիրք հրատարակել, որում անդրադարձ կլինի այդ ոլորտում հայերի ունեցած պատկառելի ավանդին: Իր կողմից Լեւոն Բարսեղյանն առաջարկեց, եթե նրանք դեմ չեն, ապա այդ գրքի հայերեն թարգմանությամբ տարբերակը հրատարակել մեզ մոտ՝ հայերենով:

«Կա-Մերի» կենտրոնը Դիարբեքիում է, իսկ Կարսում գործում է մասնաճյուղը: Հանրությունը դա միանշանակ չի ընդունել:

-1996-ին, երբ բացվեց մեր կենտրոնը, բոլորը հարց էին տալիս՝ ի՞նչ են ուզում կանայք: Մենք կանանց բացատրում ենք իրենց իրավունքները, պաշտպանում դրանք,- պատմում է Մեջբարե Օյգուրը,-սկզբում, իհարկե, թերահավատություն կար, բայց հետո մենք կարողացանք վստահություն շահել, համալրել մեր շարքերը:

Ինձ հետաքրքրում էր, թե հատկապես տղամարդիկ ինչպես են ընդունել նրանց գործունեությունը: Տիկին Օյգուրը բացատրում է, թե տղամարդիկ անկասկած պահպանողական են, նրանց ձեռնտու է ամեն ինչ թողնել



**Կարսի 120 տարեկան կառույցներից մեկը**



**Կանանց իրավունքների պաշտպանության «Կա-Մեր» կազմակերպության Կարսի մասնաճյուղի գրասենյակը**



այնպես, ինչպես կա: Բայց «Կա-Մեր»-ի կանանց նպատակն է կոտրել այնպիսի կարծրատիպերը, որոնք իրենց շահերից չեն բխում: Կարճ ասած՝ իրավահավասարության խնդիր են դնում: Ճշտում եմ.

-Ուրեմն, կարելի է ասել, որ ֆեմինիստական շարժում է ծավալել ձեր կազմակերպությունը:

-Այո, մենք ֆեմինիստներ ենք,-հաստատում են մեր գրուցակիցներն ու հավելում,-բայց մեր նպատակների մեջ չէ տղամարդկանց իրավունքների վրա բռնանալը:

Մեր հերթին, մենք թափանցիկ ակնարկում ենք իսլամական օրենքներով բազմակնության թույլատրելիության մասին: Ընդհանուր առմամբ, այս հարցում կանայք լոյալ էին.

-Եթե տղամարդու ֆինանսական հնարավորությունները թույլ են տալիս, ինչու չէ, թող մեկի փոխարեն երկու կին ունենան: Ներկայումս մեզ մոտ տղամարդկանց 8 տոկոսը երկու կին ունի:

-Այդ դեպքում, այ դուք, կհանդուրժեի՞ք, որ ձեր ամուսինը ձեզանից բացի մեկն էլ ունենար,-դիմում եմ Մեջբարե Օյգուրին:

Նրա պատասխանն ակնթարթորեն է հետեւում.

-Ես նրան դուրս կվռնդեի տնից: Եվ, ընդհանրապես, արեւելյան երկրներում այն, ինչ երկրորդ կին է կոչվում, արեւմուտքում՝ սիրուհի, այլ կերպ ասած՝ անառակ է կոչվում: ... Ինչ վերաբերում է կանանց հիմնախնդիրներին, ապա աշխարհի բոլոր անկյուններում էլ դրանք գոյություն ունեն: Օրինակ, ըստ վիճակագրության, աշխարհում յուրաքանչյուր երկու ընկերակցում մի կին է բռնաբարվում:

-Սա, անշուշտ, ցավալի վիճակագրություն է, -ասում են թուրք ֆեմինիստուհիները:

Այս ցավալի վիճակագրությունից սահուն անցում կատարելով նախատեսվող ֆուտբոլային հանդիպմանը, Լեւոն Բարսեղյանը հարցրեց, թե նրանք կցանկանայի՞ն խաղադաշտ դուրս գալ: Այնուհետեւ, ի պատասխան նրանց վարանմունքի, ավելացրեց.

-Մեր թիմից, օրինակ, երկու կին արդեն ցանկություն են հայտնել խաղալ:

Այս տեղեկությունը նրանց անչափ հետաքրքիր թվաց ու ժպտալով խոստացան մտածել այդ մասին:

«Կա-Մերի»-ի կանայք հանդիպման պաշտոնական մասից հետո մեզ հրավիրեցին իրենց կազմակերպությանը



**«Կա-Մեր» կազմակերպության Դիարբեքիից ժամանած ներկայացուցիչները եւ Կարսի գրասենյակի ղեկավարը**



**-Ներկայումս մեզ մոտ տղամարդկանց 8 տոկոսը երկու կին ունի:**

պատկանող բարեգործական ճաշարան՝ թեյախումբի: Սեւ տուֆից կառուցված հին կառույցներից այս մեկը եվրոոճով ներքին հարդարում ուներ ու անմիջականության էր տրամադրում: Միջին ու բարձր տարիքի այլ կանայք էլ կային, ու նրանց հետ էլ ինքնաբերաբար հունի մեջ ընկավ մեր գրույցը: Նրանցից մեկը մեր թարգմանչին՝ Հարություն Ֆիլյանին պատմում էր իր վաղեմի երազանքի՝ Հայաստան այցելելու մասին: Ասում էր, որ ճանապարհորդելն իր հոբբին է: Մենք հավատացրինք, որ եթե երբեւէ հաջողվի Հայաստան գալ, ապա ուրախ կլինենք նրան Գյումրիում տեսնել:

**«Սերիատ» հեռուստառադիոընկերությունը**

Կարսում, ի տարբերություն Գյումրու, մեկ հեռուստաընկերություն է գործում: քաղաքապետի սեփականությունն հանդիսացող «Սերիատը-TV»-ը նաեւ միակ ռադիոհեռարձակողն է քաղաքում: Համեմատության համար ասենք, որ Արդահանում հեռուստատեսություն չկա, իսկ մոտ 365 հազար բնակիչ ունեցող Էրզրումում դրանք երկուսն են:

Հոլդինգի իր աշխատասենյակում մեզ ընդունեց ծրագրերի բաժնի ղեկավար Օզգյուր Թուրդուլը: Մենք նրան եւ աշխատակիցներին ներկայացրեցինք Գյումրիի հեռարձակողներին. 4 հեռուստաընկերություն եւ 3 ռադիոկայան: Նա զարմացավ, որ մեզ մոտ այդքան հեռուստառադիոընկերություններ կան:

-«Սերիատը» որպես հեռուստաընկերություն հիմնվել է 1993 թվականին, հեռարձակվում է 29-րդ դեցիմետրային ալիքով: Այն ժամանակ Նայիվ Ալիբեյոլլին դեռեւս քաղաքապետ չէր: 1994-ին հիմնվեց նաեւ ռադիոկայանը՝ FM 93,3: Անցած տարիներին, թեւէ ընկերությունը Կարսում մրցակիցներ չի ունեցել, բայց, ըստ Օզգյուրի, առաջընթաց ունեցել է: Օրական 16 ժամ հեռարձակում եւ հստակ քաղաքականություն՝ սեփական հաղորդումների տեսականու ընդլայնում: Ո՛ր սրանցում ներգրավված են ոչ թե հեռուստալրագրողներ, այլ՝ տվյալ հաղորդման թեմատիկայի մասնագետներ կամ գործի նվիրյալներ: Ժամանակն է այդ մարդկանց հմտացնում, ու նրանք այլեւս պահանջված մասնագետներ են դառնում, ներգրավվում ռադիո եւ հեռուստատեսային ծրագրերում:

Մոնտաժող Հիմմետ Կունուտը եւ գլխավոր ռեժիսոր Մուսթաֆա Ուչայելին վստահեցնում են, որ «Սերիատում» ամենաթանկ «կապիտալը» կադրերն են: «Լուրերի» թողարկումների վրա աշխատում է 5-6 լրագրող: Ծրագրով դրանք օրվա ընթացքում երկու անգամ են հեռարձակվում՝ տեսագրությամբ, ժամը 20:30-ին եւ 24:00-ին: Մուսթաֆա Ուչայելին մանրամասնում է.



**Կարսի «Սերիատ» հեռուստառադիոընկերության հեռուստատաղավարում:**



**Հեռուստառադիոընկերության ծրագրերի բաժնի ղեկավար Օզգյուր Թուրդուլը զարմացավ Գյումրիում գործող հեռուստառադիոընկերությունների առատության վրա:**



**Եթերի թողարկման ստուդիայում**

-Հիմնականում լուսաբանում ենք քաղաքապետի աշխատանքային այցերը, քաղաքապետարանի գործունեությունը:

Կարսի հեռուստաընկերությունը հաղորդաշարեր ունի աշուղական ստեղծագործությունների, օրենքի մեկնաբանությունների, մարզական միջոցառումների եւ փառատոների մասին: Ռադիոկայանով, որպես կանոն, տեղական եւ կենտրոնական թերթերի տեսություն են հաղորդում: Երկու բժիշկ այստեղ բավականաչափ հետաքրքիր հաղորդաշար են վարում: Հեռուստաընկերությունը աշխատում է VHS, DV, VCD ֆորմատներով: Լսարանը սիրում է դասական եւ հին թուրքական ֆիլմեր, որոնք պարբերաբար ցուցադրվում են:

-Իսկ ինչքա՞ն աշխատավարձ են ստանում ձեր լրագրողները, -հետաքրքրվում է Լեւոն Բարսեղյանը, ներկայացնելով մեզ մոտ՝ Հայաստանի մարզային հեռուստաընկերություններում աշխատավարձի չափի լայնույթը՝ մոտ 10.000-40.000 դրամ:

Դա իմանալով, Օզգյուլն ու Մուսթաֆան, որ զարմանքով էին լսել Գյումրիում գործող հեռուստաընկերությունների քանակի մասին, ինքնագոհ ժպտալով հայացքներ փոխանակեցին:

-Ես չեի ասի, թե մեզ մոտ շատ են ստանում,-ասաց Օզգյուլը,-բայց ձերի հետ անհամեմատելի է: Ձեր լրագրողները ձրի են աշխատում...

Այս շեշտադրումից մենք անցանք ստուդիայի հիմնական ֆինանսական աղբյուրին՝ գովազդին: Բայց Օզգյուլն հավաստիացնում էր, թե դրանով հագիվ է հաջողվում ծախսերը փակել: Իսկ, ընդհանուր առմամբ, խորհրդարանական ընտրությունների շրջանն է ամենաշահութաբերը: Սակայն դրան էլ հարկ է լինում կլոր հինգ տարի սպասել:

Լեւոնը հաշվի առնելով «Սերհատում» ցուցադրվող հաղորդումների բազմազանությունը, Օզգյուլին հարցրեց, թե օրինակ՝ կուզեի՞ն, որ Գյումրիի հեռուստաընկերությունների պատրաստած հաղորդումները թարգմանաբար ցուցադրվեին իրենց եթերով:

-Եթե դիտենք ու հարմար գտնենք՝ ինչու ոչ,-ասաց նա:

Մեզ ուղեկցեցին ստուդիա, ծանոթացրեցին աշխատանքային պայմաններին, հնարավորություններին: Մեր օպերատոր Կարեն Սուքիասյանը հավանեց «Լուրերի» տաղավարում տեղադրված տեսախցիկը: Գնահատաբար նայելով, ասաց՝ «Արժեքավոր տեխնիկա է»: Լեւոնը



Կարսի միակ տեղական ռադիոկայանում. FM 93,3



Այստեղ օգտագործվում են նույն տեխնիկասարքավորումները, ինչ Հայաստանի մարզային հեռուստաընկերություններում:



լուսանկարվեց հաղորդավարական սեղանի ետեւում նստած, ասաց, որ մի ժամանակ ինքն էլ է լրատվական ծրագրեր վարել, ասաց, որ իր որդին, ինչպես Օզգյուլի 10-ամյա որդին, որ ուշիմ հայացքով անընդհատ մեզ էր հետեւում, ստուգիայում սիրում էր լինել փոքր ժամանակ: Օզգյուլ Թուրքուլն անմիջականորեն նշեց, թե իրենց ընկերությունում բոլորն էլ շահագրգիռ են սահմանի վերաբացմանը: Եվ կարծես իբրև խոսքի երաշխիք, ռադիոյով «Սարի աղջիկ» երգը դրեց ու Կարսի եթերում հայկական մեղեդի սփռվեց:

**«Կարս Հաբեր» օրաթերթը եւ իր սոցիալիստ խմբագիրը**

Որպես լրագրողների՝ մեզ, բնականաբար, հետաքրքիր էր իմանալ, թե խոսքի ազատությունը մոտավորապես ինչքա՞ն է Թուրքիայում: Մեր այցելած գրեթե բոլոր աշխատավայրերի ու աշխատասենյակների պատերին Զեմալ Աթաթուրքի լուսանկարներն էին, հարթաքանդակները, բարձրաքանդակներն ու կիսանդրիները. հին, գունատ, ծխից ու ժամանակից խունացած սեւ-ճերմակ նկարներից սկսած, վերջացրած շքեղ, մեծադիր, անգամ մարդաբոյ, յուղաներկ, ոսկեզօծ շրջանակված նկարներով: Ակնհայտ էր, որ ամենուր մեծ հարգանքով էին լցված դեպ Թուրքիայի ժամանակակից պետության հիմնադիրը: «Կարս Հաբեր» թերթի խմբագրությունը բացառությունն էր: Լեգենդար հեղափոխական Էռնեստո Չե Գեւարայի կիսանդրի-արձանիկն իր աշխատասենյակի ամենատեսանելի մասում դրած Գյումուշփալլա Քորտագը միանգամայն անկեղծ էր խոսքի ազատության թեմաներով մեզ հետ զրույցում: Քորտագի «Կարս հաբեր» թերթը հիևզ տարեկան է: Սա, իհարկե, 50-ամյա «Յուր Յուրտ» (Ազատ երկիր) թերթի համեմատ տարիք չէ, բայց խմբագիրն այս ընթացքում կարողացել է բավականին փորձ կուտակել: Միջազգային կազմակերպությունները չեն օգնում: Պետությունն իր բյուջեից տարեկան 40 հազար դոլար է հատկացնում՝ բոլոր թերթերը հավասարաչափ սուբսիդավորելու համար: Կարսի այս, ինչպես եւ այլ թերթերի սպառման հիմնական միջոցը բաժանորդագրությունն է: Նախընտրական շրջանում «Կարս հաբերի» տպաքանակը կրկնակի աճեց:

Գյումուշփալլա Քորտագը հիմնականում քաղաքական թեմաներով է գրում: Լրագրող Քորտագի ըմբոստությունը (թե ազատախոհությունը) Էժան չի նստում խմբագիր Քորտագի վրա: Իշխանությունները դժգոհ են նրանից: Խմբագրի դեմ մեկ տարում 90 դատական գործ է հարուցվել: Մեկը հենց նահանգապետի հայցով: Վեճն հասել է մինչև վճռաբեկ ատյան: Բայց նրան առայժմ հաջողվում է թերթը փրկել փակումից: Ըստ Գյումուշփալլայի, սահմանի փակ լինելու հանգամանքը ոչ միայն երկուստեք տնտեսական վնասների, այլև ծայրահեղական տրամադրությունների տարածման



**Ազատություններն Էժան չեն նստում «Կարս Հաբեր» թերթի սոցիալիստ խմբագրի վրա:**



**Կարսի կենտրոնական հրապարակներից մեկում**



**Ընտրությունների շրջանում թերթի տպաքանակը հասնում է 1000 օրինակի:**

պատճառ է դառնում: Այս մասին նա գրել է իր թերթի ապրիլի 24-ի համարում:

### **Կարսը հայտնի եւ անհայտ**

Առաջին տպավորությունը. Կարսը մեզ օտար չթվաց: Հին քաղաքը նման էր Գյումրիին, նոր քաղաքը, որ մակերեսով տասնապատիկ մեծ էր հին քաղաքից, շատ ավելի անհետաքրքիր էր: Հին քաղաքում՝ ճարտարապետությունը՝ նորի եւ հնի հնարավոր ներդաշնակությամբ էր: Բնակչության չիզոգնած կենսաձեւը. անկոտրում՝ ձանձրալի ու անձանձրույթ կենցաղավարությունը: Բայց հասարակության տարբեր շերտերում զարգացածության նույն շարժումն է գերակայողը, ինչն առկա է նաեւ Գյումրիում: Մի տեսակ տագնապի զգացում էր ներշնչում անճանաչելի Կարսը... Բայց, երբ ճանաչեցինք քաղաքը, մեզ մտերմիկ թվաց:

Կոնտրաստը... Քաղաքում կարելի էր տեսնել ինչպես գլխաշորով, այնպես էլ սրտաբաց կանանց ու աղջիկների: Գլխաշորն ավանդապահ ընտանիքին պատկանելու նշան է: Բայց սա որոշ դեպքերում, թերեւս, ավանդույթն արտաքուստ ֆետիշացնելու միջոց է, այլապես գլխաշոր կրելու հանգամանքը կունենար նաեւ դրանից բխող ներքին պարտադրանքները: Գլխաշորով մի դեռատի օրիորդ, օրինակ, ոչ մի զսպող հանգամանք չէր տեսնում բանուկ մայթին իր սիրելի տղայի հետ համբուրվելու համար: Մյուսի համար ծխելը խնդիր չէր, իսկ երրորդի համար՝ կանանց իրավահավասարության հասնելու պայքարը տաբու լինել չէր կարող:

Կարսում գործում են գյուղմթերքի վերամշակման մի քանի գործարաններ. կաթնամթերքի, հացի, շաքարի, մսի մշակման եւ այլն:

Կարսում, ինչպես եւ Գյումրիում, աչք է զարնում խանութների առատությունը: Մեծածախ ու մանրածախ առեւտրի հարյուրավոր դուքաններում ու ժամանակակից բազմահարկ խանութներում կարելի էր գտնել տառացիորեն ամեն ինչ, իսկ պանրեղենն ու նպարեղենը, հրուշակեղենը, հատկապես ռահատ լոխումն ու ընդեղենը, մեղրն ու մեղրամոմը այստեղ ներկայանում են մի քանի տասնյակի հասնող տարատեսակներով: Հաճախորդները շատ չեն, ու խանութպանները՝ հյուրընկալ ու ժպտաղեմ, ավելի հաճախ պարապուրդի են մատնված, քան թե՛ առեւտրով զբաղված: Ուստի՝ նստում են իրենց խանութների դիմաց՝ թագբեռը ձեռքներին, զրուցում հարեւան խանութպանի հետ կամ թեյ խմում: Թեյն այստեղ անփոխարինելի ըմպելիք է: Եթե ձեւափոխելու լինենք հայտնի գովազդը, կարելի է նույնիսկ ասել. «Սուրճն այստեղ ոչինչ է, թեյն՝ ամեն ինչ»: Մենք էլ այդ օրերին



**Կարսի հին թաղամասի փողոցները կարելի է շփոթել Գյումրու Սլաբոդկա եւ Թուրքի մայլա թաղամասերի հետ:**



**Այս մարդիկ բավականաչափ մեծ վարպետությամբ են անում իրենց գործը:**



**Շվաքում...**

թելուխումին վարժվեցինք այնպես, որ երբ մի տեղ էինք մտնում՝ թեյի հյուրասիրության անգամ վայրկյան ուշացումը բնագործն զգում էինք: Թեյը մատուցում էին փոքր կլոր փայլուն մատուցարաններով, փոքր ապակե կորիրան մուշուրբաններով, ճենապակե ափսեներով եւ 2-3 փոքր կտոր շաքարով:

Ստորեւ ներկայացվում է որոշ վիճակագրություն, որ քաղված է Թուրքիայի Պետական վիճակագրական հաստատության ամփոփագրերից.

Հայաստանին հարեւան Թուրքիայի մի քանի նահանգների բնակչության շարժը.

Նահանգը	1990 հոկտեմբերի 21	2000 հոկտեմբերի 22	2004 հուլիսի 1
Կարսի վիլայեթ	355823	325016	304000
Իգդիրի վիլայեթ	142601	168634	177000
Արդահանի վիլայեթ	163731	133756	124000
Ագրիի (Քարաքյոսե) վիլայեթ	437093	528744	561000

Հայաստանին հարեւան Թուրքիայի նույն նահանգների կենտրոնների բնակչության շարժը.

Քաղաքը	1985 հոկտեմբերի 20	1990 հոկտեմբերի 21	2000 հոկտեմբերի 22
Կարս	69293	78455	78473
Իգդիր	29460	38917	59880
Արդահան	16895	16761	17274
Ագրիի (Քարաքյոսե)	54492	58038	79764

Ինչպես հստակ երեւում է բերված տեղեկություններից, Կարսի եւ Արդահանի նահանգների բնակչությունը նվազում է, իսկ Կարս քաղաքի բնակչության աճը կարելի է ասել՝ կանգ է առել: Որքան հաջողվեց պարզել գրույցների ընթացքում, այժմ Կարս քաղաքի բնակչությունը գրեթե նույնն է, ինչ 2000 թվին՝ մոտ 78500 մարդ:

Փողոցներում շրջելիս տպավորություն ես ստանում, թե Կարսում բնակչության գերակշիռ մասը տարեցներ են ու հետեւությունը մեկն է, թե՛ երիտասարդների արտահոսքն է մեծ, քաղաքը ծերացող է թվում, թեպետ գուցե սա սուկ տպավորություն է:



**Կարսի փողոցներում ծերունիների առատությունը այժմ է զարնում:**



**Շուկայի մերձակայքում:**



**Չրեղենի հսկայական առատություն Կարսի դուքաններում**



**Կարպետներ**



Երբ «Օլջեկ» թերթի խմբագիր Սալիի Շահինին հարցրինք, թե թուրք եւ քուրդ բնակչության տոկոսային համամասնությունն ինչպիսի՞ն է Կարսում, ասաց. «Նման պաշտոնական վիճակագրություն չկա: Այստեղ վաղուց ձուլվել են քուրդն ու թուրքը»: Ի դեպ, այդ հարցի պատասխանն այդպես էլ չստացանք:

Իսկ համեմատության առումով, ի նկատի ունենալով գործազուրկության անվտանգությունը եւ ուղղակի քաղաքում շրջող ինքնաձիգավոր կամ դիտակետերից զգոն հայացքներով հսկող զինվորներին, կամ զինվորական մեքենաների գործնական երթերը քաղաքում, Կարսը այսպես էլ էր նման Գյումրուն:

Կարսի գերագույն խորհրդանիշը բերդն է՝ Կարսի ամրոցը, կամ, ինչպես Կարսում են ասում՝ Կարս Կալեն: Ամրոցի լուսապատկերներին կարող եք հանդիպել ամենուր՝ այցեքարտերին, օրացույցներին, իհարկե՝ դեպի հյուսիս-արեւմուտք նայելիս՝ դեմ դիմաց՝ լեռան կատարին ու ներսում՝ բոլորիս սրտերում:

### Անխուսափելի վարչարարություն

Մեր գալու նպատակին անդրադարձան քաղաքի գրեթե բոլոր լրատվամիջոցները: Լեւոն Բարսեղյանի հետ հարցազրույցը՝ մեր լուսանկարներով, գետնովեց տպագիր մամուլում: Մեքենայի վրայի PRESS մակագրի անհրաժեշտությունը կորավ, հանեցինք... Բայց միայն ՉԼՄ-ների համար չէ, որ առկա էր մեր նկատմամբ հետաքրքրությունը: Անվտանգության ծառայության Կարսի գործակալները Սբ.Առաքելոց եկեղեցու մոտ մոտեցան մեզ, քաղաքավարությամբ բարեւեցին ու կամեցան իմանալ, թե ինչ ենք նկարահանում: Բացատրեցինք. «Կարս քաղաքի մասին, մասնավորաբար ՉԼՄ ներքին եւ հասարակական կառույցների մասին ֆիլմ ենք նկարահանում»: Նրանք էլ իրենց օրենքները բացատրեցին, թե՛ ֆիմերի նկարահանման, հետազոտությունների եւ ուսումնասիրությունների իրականացման համար հարկավոր է համապատասխան անկետաներ լրացնել, ներկայացնել դրանք Կարսի նահանգապետարան՝ մշակույթի, գիտության եւ զբոսաշրջության բաժին, ստանալ համապատասխան թույլտվություն, եւ բացի այդ՝ իրենք այդ մասին պարտավոր են տեղեկացնել Անկարա՝ վերադասին: Իհարկե, նաեւ հարգալից նշեցին, որ հազիվ թե պրոբլեմներ լինեն: Իսկապես, ամեն ինչ հարթ անցավ, պարզապես այդ «արարողակարգի» վրա ժամանակի չնախատեսված կորուստ ունեցանք: Իսկ ժամանակի կորուստն ինքնին նշանակում էր ինչ-որ բան, ինչ-որ տեղ չհասցնել: Մյուս կողմից, այնքան հագեցած օրակարգով էինք առաջնորդվում, որ գրեթե ամենուր հասցնում էինք լինել:

Սամվել Հունանյան



Ճիրան՝ Մալաթիայից



Կարսի գլխավոր խորհրդանիշը՝ ամրոցը



Կարսի պատմության թանգարանում



-Ո՞վ եք, ընչացու՞ եք ... - լուսաֆորի կարմիր լույսի տակ:



Լեւոն Բարսեղյան  
Լուսանկարները՝ Լեւոն Բարսեղյանի  
Գյուլմրի-Կարս-Անի-Գյուլմրի



**Լրագրող Սամվել Զունանյանը  
էւ օպերատոր  
Կարեն Սուքիասյանը**